ԱՆԿԱԽ ՂԱՐԱԲԱՂԸ ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ Է

Երեւան. 2 սեպտեմբերի – Այսօր Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում հանդիսավորությամբ նշվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման երրորդ տարեդարձը: Հավաքվածները, որոնց մեջ էին նաեւ «Փաստ» գործակալության ներկայացուցիչները, հույս հայտնեցին, որ իրապես անկախացած Արցախը ամենամոտ ապագայում կարժանանա նաեւ միջազգային ճանաչման: Ընթերցվեց ՀՀ ԳԽ նախագահության շնորհավորական հեռագիրը ԼՂՀ Գերագույն Խորհրդին, Պաշտպանության պետական կոմիտեին ու Արցախի ժողովրդին: Հայաստանի խորհրդարանականներն այս հեռագրում համոզմունք են հայտնում, որ ԼՂՀ ղեկավարների անդուլ աշխատանքն իրականություն կդարձնի արցախահայության երազանքները:

Հավաքի ավարտին ներկաների անունից շնորհավորական հեռագիր ուղարկվեց մոսկովյան եռակողմ բանակցություններին մասնակցող ԼՂՀ պատվիրակությանը:

«ՓԱՍՏ»